ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով թղթի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.03.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Սեփոյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Սմարթլայն» ՍՊԸ (ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ(ք. Երևան, Մաշտոցի 16Ա 4)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/	
				«Սմարթլայն» ՍՊԸ	**«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ**
1	թուղթ, A4 ֆորմատի	55145	37498600	29410667	29870208

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Սմարթլայն» ՍՊԸ** –ին:
2. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ** –ին:
3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ.Սեփոյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան